ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/621 «05» 05 2017թ.

«ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ն. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻՆ
ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ,
Օգոստոսի 23 փող., 21/3ա

Երևանի քաղաքապետարանի և «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 02.03.2017 թվականին կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/76-2» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում Երևան քաղաքի մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավոր է «Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ»:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

Վերը նշված կետի համաձայն՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնող Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է, որ Կատարողը խախտել է N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմանները, այն է՝ Կատարողը չի ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայացումը շինարարական օբյեկտում, ինչի առնչությամբ կազմված համապատասխան արձանագրություններ և աշխատակազմի ֆինանսական վարչության պետի համախատասխան գրությունները տրամադրվել են Ձեզ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ «Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով»:

Պայմանագրի 2.1.3 կետի ա/ ենթակետի համաձայն՝ «Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկում եմ Ձեզ սույն Պայմանագիրը՝ 3-րդ չափաբաժնի մասով միակողմանի լուծելու վերաբերյալ գրությունը, որը նաև ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման հավելված N1 հաստատված կարգի 36-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում, ստանալու օրվա դրությամբ վճարել Պայմանագրի 5.2 կետով հաշվարկված տույժը՝ 2290 (երկու հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որը հարկավոր է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900015211429 հաշվեհամարին:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Գ. ՉԹՐՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
011 514-375